



ԾԱՐԵՑԻ ԻԾԵԱՆԱԶՈՒՆՆԵՐԸ ՀԱՂԲԱՏ ԵՎ ՍԱՆԱՀԻՆ ՎԱՆՔԵՐԻ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐ*

Հովհաննես Բ՝ որդի Հասանի և Դովի.—Սա կարծես կրկնակոխ հետևում էր հորեղբորը՝ Հովհաննես Ա-ին, և պետք է յուրովի կրկներ քրա կենսագրությունն ու ճակատագիրը. կրթությունն առավ, մախ կրոնավորեց խաչնում, ապա դարձավ Սամահի առաջնորդը, իսկ հորեղբոր մահից հետո ժառանգեց քրա Աթոռը Հաղբատում:

Այս ճանապարհը Ծարեցի հոգևոր հայրերի համար ժառանգական իրավունքի պես մի բան էր դարձել: Հետագայում էլ պետք է այնտեղ այս Հովհաննեսին հաջորդեր քրա եղբորորդի Հովհաննեսը, և այսպես շարունակ:

Երևի այստեղ քիչ դեր չէր խաղում այն հաճաժամքը, որ հիշյալ երկու վանքերի պատրոնները Զաքարյան տոհմի պապազատներն էին, իսկ Ծարեցիները հանդես էին գալիս որպես քրանց ազգականներ: Սակայն առաջին Հովհաննեսը Սամահի ու Հաղբատի առաջնորդությունները վարեց նախքան ազգակցության ստեղծումը: Իսկ հաջորդները Սամահի ու Հաղբատի Աթոռներին բազմում էին առավելապես իրենց սեփական արժանիքների համար, քան թե ժառանգական կամ ազգակցական իրավունքի թելադրանքով:

Իզուր չենք ասում, թե Հասանի որդի Հովհաննեսը յուրովի կրկնում էր Հասանի եղբայր Հովհաննեսի կենսագրությունը: Սամահի ու Հաղբատի վանքերում փոխարինելով հորեղբորը, նա իր ապրած կյանքի տարիները դարձրեց այդ միաբանությունների հոգևոր-մշակութային կյանքի նոր վերելքի շրջան՝ և տեղում թողնելով կերտված ու վերակերտված շենքեր, ստեղծված ու փրկված ձեռագիր մատյաններ:

Հովհաննես Բ-ը Սամահի վանքի առաջնորդ է դարձել Աբասի որդի Գրիգոր վարդապետից հետո: Իսկ այդ Գրիգորի առաջնորդությանը վերաբերող արձանագրություններ են պահպանվել 1214—1217

թվականներից⁴⁴: Հովհաննեսի առաջնորդության մասին խոսող առաջին արձանագրությունն էլ 1221-ից է⁴⁵: Հնարավոր է, որ նա առաջնորդ ձեռնադրված լինի 1217 ու 1221 թվականների միջև: Երկրորդ արձանագրությունն իրենն է՝ Հովհաննեսինը: Այստեղ նա՝ «Թ.ՈՀԱ. (1222) ... առաջնորդ Սամահին», նույն վանքին է նվիրում «Աստվածածին (եկեղեցու) ձորին ապին և գտներն և զայն հողն, որ ի վերի դեհին է՝ ի հիւրատունա»⁴⁶:

Նույն 1222 թ. մի այլ արձանագրության մեջ Ծոթոռիկի որդի Դավիթն է թվարկում իր նվիրատվությունները Հովհաննեսի առաջնորդությանը⁴⁷:

Սամահի վանքի մատենադարանի նախագալթում պահպանվել է Հովհաննեսի 1225-ի գրած մի արձանագրությունը իր կառուցած մատուռի մասին. «Ի թվի ՈՀԴ. (1225) ես տեղ Յովհաննես՝ առաջնորդ Սամահին»՝ քուերորդի պատրոնացն, շինեցի գմատուրն»⁴⁸:

Սա Հովհաննես Բ-ի վերջին արձանագրությունն է Սամահում: Դրանից հետո հաղբատյան քրա գործունեության մասին պատմում են ինչպես Կիրակոս Գանձակեցին, այնպես էլ Հովհաննեսի սեփական արձանագրությունը. 1233-ից: Ահա Կիրակոսի խոսքը քրա մասին. «Սա. (Յովհաննեսը.—Բ. Ու.) շինեաց բերդ մի ամրագոյն պարսպօք մէջ ընդ Հաղբատ և ընդ Սամահին: Վասն որոյ գծտոթին ընդ երկու մեծամեծ վանքերն եղև, որպէս թէ ի հողոյ Սամա-

⁴⁴ Դաֆադարյան, Սամահի, էջ 116, 122, 128 ևն:

⁴⁵ Դաֆադարյան, Սամահի, էջ 188. թվ. ՈՀ (1221) Հասանն ու իր կին Վախագր վանքին նվիրում են «ի Ծաղերոյն գժատարևանք ամեն շահով մի արավար հող», և Հովհաննեսն ու միաբաններն էլ խոստանում են խաչի երևմանը մի պատարագ տալ բոլոր եկեղեցիներում:

⁴⁶ Անդ, էջ 183:

⁴⁷ Անդ, էջ 108:

⁴⁸ Անդ, էջ 170:

* Ծարունակված «Էջմիածին» ամսագրի 1974 թվականի № ԺԱ-ից:

նահանգի միջև գտնվող բերդը⁶²։ Ինչ վերաբերում է բերդի ներսում Հովհաննեսի կառուցած եկեղեցուն, որ կոչվում էր Դրսեվանք, այն «կանգուն է, թեև նորոգությունների բազմաթիվ հետքեր են երևում վրան»⁶³։

Հովհաննեսի անվան հետ կապված ձեռագրական հիշատակներ ևս կան։ Սակայն մեկը, որ Գարեգին կաթողիկոսը համարում է նրա պատվերով գրված, մեզ թվում է անհավանական։ Դա Թարգմանչաց կոչված հայտնի Ավետարանն է, որի ստացողն է մի «պատուական քահանայ» կ «երևելի պարոն Յովհաննես»⁶⁴։

Գարեգին կաթողիկոսն այս Հովհաննեսի աթոյվ գրել է. «Կարծում ենք, որ «ստացող երևելի Յովհաննես» քահանան նույնպես Դովիյան էր։ Մի «Ուսման երեց» ապրում էր ԺԳ դարի առաջին տասնամյակներում, որի որդին «Դովի» հիշված է Ծարի ա. Սարգսի 21Է.—1279 թվի արձանագրության մեջ»⁶⁵, և հղում է Մ. Բարխուտարյանի «Արցախ»-ի էջ 408-ին։

Այստեղ շփոթ է ստեղծված։ Նախ, «Արցախ»-ի համապատասխան էջում գրված է. «ի պարոնությունս Դովիին որդուն Ուսման երեցու», որ եթե գրաբարի շարադրությամբ կարդաս, իսկապես կլինի «Դովիին» որդուն Ուսման երեցու», Դովի՝ Ուսման երեցի որդի։ Մինչդեռ արձանագրության մեջ տեղ է գտել ժողովրդական (Ղարաբաղի բարբառի) շարադրությունը, որով Ուսման երեցն է Դովիի (մեզ հայտնի Դովի-Կապի) որդին։ Սա նույնիսկ որդին էլ չէ, այլ թոռը (Գրիգոր մեծ իշխանի որդի Հովհաննեսը), որը Հաղբատի Աթոռին պիտի բազմեր՝ անցնելով հորեղբայր Հովհաննես Բ-ի և վերջինիս հորեղբայր Հովհաննես Ա-ի ճանապարհը։ Այս Հովհաննես Գ-ն ապրել է մինչև 13-րդ դարի վերջը։ Հնարավոր է, որ 1282 թվականին նա ձեռագիր պատվիրեր՝ լինելով «երևելի քահանա» և «երևելի պարոն»։

Այս ձեռագրի «պատուական քահանայ և երևելի պարոն Յովհաննես»-ը, որ հիշվում է նաև որպես «առաջ երեց»⁶⁶, ինչպես արդեն Կարապետ եպիսկոպոսն է նկատել⁶⁷, որդին է ոչ թե Հասանի ու Դովիի, այլ ոմն Խաչիկի, որ անմիջական կապ չունի Դովիի ու նրա ժառանգների հետ։ «ԶՅովհաննես ածագարդ

քահանայ և զԽաչիկ հայր իր լիշեսցիք»,—խնդրում է հիշատակագիրը⁶⁸։

Կա մի հանգամանք ևս, որ ձեռագրի պատվիրատուն հետացնում է Դովիյան տոհմից։ Այս ձեռագիրը, ինչպես քիչ հետո կտեսնենք, հետագայում գնել են Գրիգոր Դովիյանն ու նրա կին Ասիամ⁶⁹։ Մինչդեռ եթե այն իրենց տոհմին պատկանած լիներ, ինչո՞ւ պիտի վերստին գնեին։

Հովհաննես Բ-ի մահվան տարին ստույգ հայտնի չէ։ Կ. Ղաֆադարյանը գտնում է, որ նա «մեռած պետք է լինի 1240-ին կամ 1289-ին»⁷⁰։

Հովհաննես Գ-ի որդի Գրիգորի իշխանի, թոռ Հասան Ա-ի և Դովիի.—Վերին Խաչենի իշխան Գրիգորի որդի Հովհաննեսը ևս 13-րդ դարում հայրենի Ծարից հասել է Հաղբատի առաջնորդության աստիճանին, դարձել ժամանակի հայ հոգևոր մշակության կյանքի նշանավոր կազմակերպիչներից մեկը։ Նրա կյանքի ու գործունեության առաջին տարիների մասին տարբեր (մեծ մասամբ՝ հակասական) կարծիքներ են արտահայտվել մեր քանասիրության մեջ։ Ուշադրության արժանի է հատկապես նրա հաղբատյան գործունեության սկզբի և տևողության հարցը, որ ցայժմ չի պարզված։

Գարեգին Հովսեփյանի կարծիքով՝ Հաղբատականի առաջնորդ Համազասպին (1248—1257) անմիջապես հաջորդել է Հովհաննես Գ Դովիյանը՝ «զիտության, արվեստի, վանքի պայծառության մեծ աշխատավորներից մեկը»։ Ուրեմն, Հովհաննեսի աթոռակալությունը պետք է հաշվել 1257 թվականից⁷¹, մինչև նույն դարի 80-ական թվականները⁷²։

Գարեգին կաթողիկոսի կարծիքը քաժանում էր նաև Հր. Աճառյանը, որի համոզմամբ մինևույն եպիսկոպոս Հովհաննես Դովիյանն է 1257-ին հաջորդել Համազասպ Անեցուն, ապա իր ծախսով կառուցել Հաղբատի կամարակապ մեծ աղբյուրը, 1278 թ. մի երկար արձանագրության մեջ պատմել նախընթաց (1217—1278 թթ.) իր գործերը՝ վանքի գավթի գրատան և սրահների կառուցումը, վանքը ջուր բերելը, Ուրդաձորի և Նշանի համար մեծածախ պահարան շինել տալը, Բողա գյուղն առնելն ու վանքին նվիրելը և աթոքակ Սաղունի համար մի խաչքար կանգնեցնելը։ «Հիշատակված է արձանագրության մեջ մինչև 1280 թ.»,—եզրակացրել է Հր. Աճառյանը և այս Հովհաննեսի հետ նույնական ճանաչել ինչպես Հովհաննես

⁶² Զաքարեայ Սարկաազ, Պատմագրություն, վաղաբապատ, 1870, էջ 155։

⁶³ Ղաֆադարյան, Հաղբատ, էջ 84։

⁶⁴ Մատենադարանի ձեռ. № 2743, էջ 7բ։

⁶⁵ Յուզակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա, էջ 866. Հովհաննեսը համարվում է և ծաղկող, որ հիշո չէ։ Ծաղկողն ու նկարիչը Գրիգորն է (որ «Յուզակ...»-ի կազմողների կողմից անտեղի կոչված է նաև «Գարիկին»)։ Ձեռագրի թ. 12բ. «Տէր Աստուած, ողորմես Գրիգոր նկարչի և աշխատողաց ի սմայ»։ էջ 115ա. «Տէր Աստուած, ողորմես Գրիգորի ծաղկողի, ամեն, ամեն»։ Գարեգին կաթողիկոս, Յիշատակարան, Ա, էջ 886։

⁶⁶ Ձեռագիր № 2743, թ. 7բ, 12ա։

⁶⁷ Կարապետ եպիսկոպոս, Դովիյանք, էջ 58։

⁶⁸ Մատենադարան, ձեռ. № 2743, էջ 8ա։

⁶⁹ Ձեռ. № 2743, էջ 118բ, 288բ։

⁷⁰ Ղաֆադարյան, Հաղբատ, էջ 84։

⁷¹ Գարեգին արքեպ. Հովսեփյան, Հաղբատի դըպրոցի մի գլուխ-գործոց (Գետաշենի Ավետարանը). Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմության, պրակ Ա, էջ 67բ։ Այստեղ Գարեգին Հովսեփյանը նրան համարում է Հովհաննես Դ, որովհետև Հովհաննես Բ Դովիյանից հետո կարճատև առաջնորդություն է արել նաև մի այլ Հովհաննես՝ գիտնականի կողմից համարված Հովհաննես Գ (անդ)։

⁷² Անդ, էջ 69բ։

հետև գիտնականը միանգամայն համոզիչ կերպով կարծում է, որ «գրատան կառուցումը միջնադարյան պայմաններում պետք է տևած լինեք առնվազն երեք տարի, ուստի... գրատունը վերակառուցվել և նրա միջանցքը շինվել է 1258—1262 թվականների ընթացքում»⁸¹:

Այսբանից հետո արդեն ավելորդ չի լինի եզրակացնել, որ եթե գրատան վերակառուցումը և նրա սրահի կառուցումը 1258—1262 թթ. կատարվել է մի Հովհաննես եպիսկոպոսի ղեկավարությամբ, որը (նույն ինքը) 1273-ին արձանագրել է, թե ինքն է ուղեկառուցողը, ապա մենք գործ ունենք մեկ Հովհաննես եպիսկոպոսի հետ: Վերջինիս խոսքից էլ արդեն պարզ էր դարձել, որ նա ինքը Հովհաննես Դուխանն է եղել, Սարգիս վարդապետի հոգեհայրը և պապի եղբայրը: Այսբանից հետո մեջտեղից կվերանա 1257-ից, այսինքն՝ Համազասպ Անցեու առաջնորդության վերջին տարուց մինչև 1273 թ. ընկած ժամանակամիջոցին Հաղբատում քանդակված արձանագրությունների մեջ մի քանի առաջնորդ Հովհաննեսներ տեսնելու վարկածը:

Մեր կարծիքի դեմ խոսող փաստ կարող է համարվել մատենագրական մի փաստ, որը, սակայն, ըստ էության չի փոխում հարցի վիճակը: Կիրակոս Գանձակեցին, Գետիկ վանքի առաջնորդների ցանկը ներկայացնելիս, հիշում է և մի Հովհաննես Արմանեցու, «որ և Հաղարծնին էր առաջնորդ, և ձեռնադրեցաւ եպիսկոպոս չեթնհարիւր հինգ [1258] թուականին: Սա շինեաց ի Հաղարծնին գտեղանատունն երևելի՝ սրբատաշ վիժօք, և ապա գնաց ի մեծ Աթոռն ի Հաղբատ»⁸²:

Այս Հովհաննեսից, հենց «Արմանեցի» ինքնահորջոյմամբ, մի արձանագրություն կա Գոշախանում («Նոր-Գետիկ»)։ «Եւ» տէր Յովհաննէս Արմանեցի, ազատ գրեցի գԳետկա ժողովուրդս ի հարկէ, որ տալին յԱթոռն իշխանութեան Գոնցա խաթունին, ի խնորոյ Կիրակոս վարդապետի... Գրեցաւ 28 (1260) թվիս, վկայութեամբ Յովանիսի, Վարդան վարդապետի»⁸³:

Պարզ է, որ սա Ծարեցի կամ Խաչենցի Հովհաննէսը չէ: Բայց ո՞վ է, ի՞նչ էր անում Հաղբատում:

Կիրակոսը չի ասում, թե Հովհաննէս Արմանեցին առաջնորդ է եղել Հաղբատում: Միայն՝ «գնաց ի մեծ Աթոռն ի Հաղբատ»: Գուցե այնտեղ նա սոսկ վարդապետ էր կամ շարքային մի վանական: Վիժնագրե-

րը ևս ոչինչ չեն ավելացնում մատենագրական պակասավոր տեղեկությամբ. Հաղբատում Հովհաննէս Արմանեցու անունով չի պահպանվել որևէ արձանագրություն, հավանական է՝ չի էլ գրվել (համեմատել դեպի՝ Կ. Ղաֆադարյանը, որ հավաքել է Հաղբատյան բոլոր վիժնագրերը, չունի այդպիսի արձանագրություն): Մինչդեռ, եթե Հովհաննէս Արմանեցին վարած լիներ վանքի առաջնորդությունը, այն էլ նվիրատվություններով այնքան հարուստ 13-րդ դ. կեսին, անհնար է, որ նրա անունը քանդակված չլինեք որևէ կապակցության մեջ:

Հովհաննէս Գ-ի կառուցած աղբյուր-ինը, գրատունը, սրահը և փոքր գավթի Հաղբատի ճարտարապետական համալիրի գեղեցիկ բաղկացուցիչներից են, իսկ փոքր գավթի մեջ կանգնեցված Ամենափրկիչ խաչքարը, որի թիկունքին փորագրված է մեծ արձանագրությունը, յուրահատուկ տեղ է գրավում մուսուլմանական հուշարձանների շարքում: Այս խաչքարի երեսի զարդաքանդակները՝ խաչի տեղ խաչված Քրիստոսի բարձրաքանդակը, հրեշտակների ու առաքյալների պատկերները բարձրարվեստ գործեր են՝ կատարված նուրբ վարպետությամբ ու բարձր ճաշակով: Ընշտ է, խաչված Քրիստոսի բարձրաքանդակով խաչանախշ ստեղծվող նորություն չէր այս ժամանակի արվեստի մեջ. Գանձասարի պրևմտյան պատի ճակատին կար այդպիսի մի հույակապ խաչ: Սակայն Հովհաննէս Գ-ի խաչարձանի վրա այն իր նոր լուծումն էր ստացել՝ համադրվելով մյուս քանդակների և զարդանախշերի հետ: Այս խաչարձանին հար և նման մեկ ուրիշն էլ գտնվում է Դսեղ գյուղում՝ կանգնեցված 1281 թ., առաջինից ութ տարի հետո, Վահրամ վարդապետի ձեռքով⁸⁴: Կ. Ղաֆադարյանի կարծիքով՝ Հաղբատի Ամենափրկիչ խաչարձանի հեղինակը ևս նույն Վահրամն է⁸⁵:

Հովհաննէս Գ-ի առաջնորդության ժամանակներում առավել ծանրացել էր Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակը: Մշակութային կյանքի զարգացման համար միջոցներ չկային: Եվ հենց այս ծանր պայմաններում էր նա հանդես գալիս որպես մի եռանդուն գործիչ, որը հայրենի երկրի դառն ու դժվար օրերին վառ էր պահում Հաղբատավանքի մտավոր կյանքի ջահը, ձեռագրեր էր ընդօրինակել տալիս և ինքն էլ սրբագրում էր այդ ընդօրինակումները, կապ էր հաստատում Վարդան վարդապետի, Արևմտյան Հայաստանի խոշոր գործիչ Հովհաննէս Երզնկացու հետ, հովանավորում վերջինիս լուսավորական գործունեությունը:

Գրավոր վկայություն ունենք այն մասին, որ «ի թվիս 20-ի (1285) եղև մեկնութիւն Երզոյ երզոցս ի Վարդանայ ի գիտնական և ի տիեզերապոյս վարդապետէ, յատուածամերձ սորի ուխտն Հաղբատայ, ընդ հովանեաւ Սուրբ Կրճախ փրկութեան մերոյ, արեգականս և հօր և հաւաքողի սրբութեանս մերոյ...

⁸⁴ Ս. Բարխուդարյան, Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, Երևան, 1983, էջ 145:

⁸⁵ Ղաֆադարյան, Հաղբատ, էջ 50:

⁸¹ Ղաֆադարյան, Հաղբատ, էջ 42:

⁸² Կիրակոս, էջ 223:

⁸³ Զանգիդարյան, Մխիթար Գոշը և Նոր-Գետիկ վանքը («Աշխատություններ Հայաստանի Պետ. պատմ. թանգարանի, հ. I»), էջ 160, 161: Գոնցա խաթունը Զաքարյան Խվանի որդի Ավագ աթաբակի կինն էր: Ավագը մահացել է 1259/60 թ. (Կիրակոս, էջ 321, Օրբելեան, էջ 412): Ամուսնու մահից հետո Գոնցան էր տնօրինում հայրենի տիրույթների գործը, քանի որ արու գավակ չէին ունեցել: Նոր Գետիկն ու շրջակաները ևս գտնվում էին Ավագի (Գոնցայի) իշխանության ներքո:

յարձիգեպիսկոպոսութեան տեսում Հովհաննիսի, զորս ի կամս իւր խնամեսցէ և ի սէրն իւր մեծուսցէ...»⁸⁶:

Հովհաննիսի առաջնորդության տարիներին Հաղ-բատի ձեռագրատունը հարստացել է ընտիր այնպիսի ընդօրինակություններով, որոնք փայլում էին մաս իրենց մանրամասնական բարձր արժանիքներով: Բազմազան էպիսկոպոսը ժամանակ էր գտնում ձեռագրեր սրբագրելու համար: Մաշտոցի անվան մատենադարանում պահվող մի բարձրագույն ձեռագիր՝ ընդօրինակված Հաղբատում, դարձյալ առնչվում է Վարդան վարդապետի անվանը և հիշատակարան ունի այն մասին, որ վաճառ առաջնորդ Հովհաննիսին է այն սրբագրել: Հիշատակագիրն աղաչում է հիշել «Վարդան վարդապետ հազացող այսր մատենի գործնականագույնքն քննեցա», ապա և «իշխան բարոյ արժանատուն և զմեծապատիւ արձիգեպիսկոպոս մեծառնչակ սր ուխտին Հաղբատայ գտնէ Յոհաննես, որ գալիսնալս սրբագրեալ, և զմոր[իս] ձեռնաւում զեղբարորդին հարազատ[տ] Սարգիս քահանայ, որ ի վարժս կրթութե[ն] բանի է պարապեալ, որ և շնորհեաց իսկ զարիմակս...»:

Այս ձեռագիրն ընդօրինակվել և սրբագրվել է 21-րդ (1296) թվականին⁸⁷:

Նախորդների և հենց իր՝ Հովհաննիսի օրոք Հաղբատի վանքում ձեռագրերն այնքան էին շատացել, որ Հովհաննեսը նրանց համար հատուկ շենք կառուցեց⁸⁸:

Հովհաննես Գ-ի մշակութային կարևոր ձեռնարկներից մեկն էլ կապված է Արցախի իշխանաց իշխան Հասան-Ջալալի թոռ Վախտանգի և Հովհաննես Երզնկացու հետ: 1284 թ. Թիֆլիս գալով՝ Հովհաննես Երզնկացին հանդիպում է պատանի Վախտանգին և Հաղբատի առաջնորդ Հովհաննես Գ-ին: Նրանց երկուսի և հատկապես Հովհաննեսի հորդորմամբով միջնադարի մեր մեծ մտածողը գրում է «Յաղագս երկնային շարժման» երկը՝ իրեն նախադրություն հիշատակագրելով իր սրտարոխ խոսքը հորդորողների մասին: «Յոր հարկեալ յորդորեաց զտկարութիւնս մեր՝ մեծագոյն էպիսկոպոսն տր Յոհաննես ազնուական զարմից և քարետոմսիկ հարց ծնունդ»⁸⁹:

Հովհաննես Գ-ը Հյուսիս-արևելյան Հայաստանի բոլոր մահաճգններում հոշակված ու հարգված հոգեվորական էր: Դեղձնուտի վանքում (Դջնանի շրջանում) քանդակված մի գեղեցիկ խաչքարի հեղինակներ Պողոսն ու Քաղաքը 1275 թ. Հաղբատի արքե-

պիսկոպոս Հովհաննիսին համարում են «հեզ և մարդասեր և մեր յոյս»⁹⁰:

Հայտնի են մաս Հովհաննես Գ-ի չորս հարցերին Երզնկացու տված պատասխանները՝ հավանաբար դարձյալ թիֆլիսյան հանդիպման ժամանակ («Տեսուն Յոհաննիսի բարձրատոմսի և մեծազարմ էպիսկոպոսի Դոսի թոռն կոչեցելոյ՝ առաքինազարդ և իմաստնախոհ գլխոյ եկեղեցոյ. հարցումն բանից առ... Յոհ[ան] Երզնկացի և պատասխանիք ըստ թուոյ քանիցն հարցման» (չորս հարց ու պատասխան)⁹¹:

Այս բոլորը վկայություն են այն երախտալից գործի, որ կատարում էր Հովհաննես Գ-ը՝ շարունակելով իր անվանի նախորդների՝ Մխիթար Գոշի ու Գրիգոր Տուտեղորդու փառավոր աւանդները՝ հայ ժողովրդի տարբեր հատվածները հոգևոր ոլորտում միավորելու և այս կերպ օտարամուտ կործանիչ հեղեղների դիմագրավելու նպատակով: Եվ պատահական չէ, որ 18-րդ դ. վերջերին Հյուսիս-արևելյան Հայաստանի երևելի էպիսկոպոսների, վարդապետների և իշխանների հետ միասին (Ստեփանոս Օրբելյան, Եսայի Նշեցի, Օրբելյան և Պողոսյան իշխաններ և այլք) այս Հովհաննեսը ևս ստորագրեց Գրիգոր Անավարզցի կաթողիկոսին (1298—1307) ուղղված թղթին՝ պաշտպան կանգնելով հայրենի աւանդություններին, ընդդեմ բյուզանդական եկեղեցու մոր ոտնձգություններին⁹², որոնք թղթի հեղինակ Ստ. Օրբելյանի գնահատմամբ՝ հայոց եկեղեցին կարող էին վարակել «անողջանալի ցավօք, որ իբր զքաղցկեղ ճարակել յսկան թօթափել զհասարակ անդամս եկեղեցոյ...»⁹³:

Այս է համարտոտ ուրվագիծը ծարեցի երեք Հովհաննեսների կյանքի և գործունեության:

Հաջորդ պատմաաշխատներում ևս Ծարի իշխանական տոհմը տվել է հոգևոր մշակույթի նշանավոր գործիչներ: Հայտնի են՝ Սարգիս էպիսկոպոս Դոսիյանը (ԺԴ դար), Հովհաննես էպիսկոպոսը՝ Դագի վանքի առաջնորդ (ԺԵ դ.), Հովհաննիսիկ Ծարեցին՝ ԺԶ դարի ժամանակագիր-պատմիչ, Մատթեոս Ծարեցին՝ հայ տպագրության նախակարապետներից մեկը (ԺԷ դ.): Նրանք, ինչպես և արժանահիշատակ նախորդները, հայոց պատմության մեջ են մտել մեր ազգային մշակույթի զարգացման գործին բերած իրենց նպաստով ու երախտիքով:

⁹⁰ Ս. Բարխուդարյան, Միջնադարյան հայ ճարտարապետներ, էջ 144:

⁹¹ Մատենադարան, ձեռ. № 644, թ. 78բ—84ա: Նաև՝ Մ. Վ. Քեչիշյան, Ցուցակ հայերեն ձեռագրաց Ջմատի վանքի մատենադարանին, Վիեննա, 1964, էջ 496:

⁹² «Ես տեր Յովհաննես՝ շնորհօքն Աստուծոյ էպիսկոպոս Հաղբատայ, համախոհ և միաբան եմ իմով վիճակելովս այս ազգադատան մամակիս և մզովն զոչ հաւանողսն ընդ այլ հերձուածողսն» (Օրբելեան, Պատմութիւն, էջ 461):

⁹³ Օրբելեան, էջ 461:

⁸⁶ Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 471:

⁸⁷ Մատենադարան, ձեռագիր № 2804, էջ 186բ:

⁸⁸ Ռուստոմ բեգ Երզնկեանց, Հնախօսական տեղագրութիւն, Հաղբատայ աշխարհափոխական վանքի սրբոյ Նշանի, Վաղարշապատ, 1886, էջ 44, 47:

⁸⁹ Տեղորակ համատու և լի իմաստնախոհ բանիք, էջ Ժ: